



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

« 22 » 08 2018թ.

No 06/3-4/50217-18

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՄՁ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ
ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ՊԵԿ ՓՈՔՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍԶՈՒԹՅՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Տ. ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

ՀՀ ՊԵԿ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ Վ.ՍԻՍԱԿՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 06.06.2018թ.

թիվ Պ-36 գրության

Հարգելի պարոն Համբարձումյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը և 307-րդ հոդվածի 3-րդ մասը, իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

ՀՀ հարկային օրենսգրքի 386-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործարքների դիմաց կանխիկ դրամով վճարումների նկատմամբ կիրառվում են, մասնավորապես, հետևյալ սահմանափակումները.

- ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման յուրաքանչյուր գործարքի դիմաց կանխիկ դրամով գումարի վճարման առավելագույն չափը սահմանվում է 300 հազար դրամ (ներառյալ՝ ԱԱՀ-ի գումարը), իսկ մեկ ամսվա ընթացքում այդպիսի գործարքների հանրագումարի մասով՝ 3 միլիոն դրամ (ներառյալ՝ ԱԱՀ-ի գումարը).

- ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման յուրաքանչյուր գործարքի դիմաց կանխիկ դրամով գումարի ընդունման առավելագույն չափը սահմանվում է 300 հազար դրամ (ներառյալ՝ ԱԱՀ-ի գումարը), իսկ մեկ ամսվա ընթացքում այդպիսի գործարքների հանրագումարի մասով՝ 3 միլիոն դրամ (ներառյալ՝ ԱԱՀ-ի գումարը), բացառությամբ նույն մասի 3-րդ կետով սահմանված դեպքերի:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված սահմանափակումների կիրառության իմաստով՝ կանխիկ դրամով վճարում է համարվում ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման յուրաքանչյուր գործարքի դիմաց կատարվող քուրք վճարումների (այդ թվում՝ կանխավճարների, մասնակի վճարումների) հանրագումարը:

Նույն հոդվածի 1-ին մասով սահմանված սահմանափակումները՝

1) կիրառելի են՝

ա. կոմիսիոներին, գործակալին կամ հանձնակատարին հասանելիք գումարների (միջնորդավճարների) վճարման կամ ընդունման դեպքերում,

բ. կոմիտենտին, պրինցիպալի կամ հանձնարարողի՝ համապատասխանաբար կոմիսիոներից, գործակալից կամ հանձնակատարից գումարների ընդունման դեպքերում,

2) կիրառելի չեն կոմիսիոների, գործակալի կամ հանձնակատարի կողմից համապատասխանաբար կոմիտենտին, պրինցիպալին կամ հանձնարարողին կանխիկ դրամով գումարի վճարման, ինչպես նաև ապրանքների վերջնական գնորդներից, աշխատանքներ ընդունողներից կամ ծառայություններ ստացողներից կանխիկ դրամով գումարի ընդունման դեպքերում:

Հաշվի առնելով վերոնշյալ կարգավորումները՝ հայտնում ենք, որ գործակալական ապրանքների շրջանակներում իրականացվող ապրանքների մատակարարման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման մասով) դեպքում պրինցիպալի՝ գործակալից ընդունվող կանխիկ գումարների մասով պրինցիպալի նկատմամբ կիրառելի են ՀՀ հարկային օրենսգրքի 386-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները (գրությամբ նշված դեպքում կանխիկ դրամով գումարի ընդունման առավելագույն չափը մեկ ամսվա ընթացքում չպետք է գերազանցի 3 միլիոն դրամը):

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



Recoverable Signature

X

VERIFIED OCSP 8/28/2018 20:50:41 GMT+4

Signed by: MANUKYAN ARTUR 3801690067

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ